Արձանագրություն N 2
« ԱՄԱՔՀԴ- ՊԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

<<ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Ք. Արարատ 21 ապրիլի 2016թ.
ժամը 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սեդրակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մխիթարյան, Գ. Մարտիրոսյան, Լ. Նահապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Նազարյան

1. **Հայտերի բացման մասին**

(Ա. Սեդրակյան)

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Հասցեն
1	**"ՆՆԱ" ՍՊԸ**	ք.Վեդի Կասյան 24 **հեռ 091 209251**
2	**"ԱՐԱՐԱՏՇԻՆ" ՍՊԸ**	ք. Արարատ Խանջյան 12 հեռ. 091 564545
3	**"Վահրադյան Շին" ՍՊԸ**	ք. Ստեփանավան Չարենցի 175 հեռ. 077 74 16 44

1.2 մասնակիցների կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով հետևյալն է

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Պայմանագրի համար առաջարկվող գները		
		ԱԱՀ	Գինը առանց ԱԱՀ	Ընդհանուր գինը
2	**"ԱՐԱՐԱՏՇԻՆ" ՍՊԸ**	1542794	7713968	9256762
3	**"Վահրադյան Շին" ՍՊԸ**	1615938	8079690	9695628

2. մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան.

3. "ԱՐԱՐԱՏՇԻՆ" ՍՊԸ-ի և "Վահրադյան Շին" ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարներում ընթացակարգի հրավերով /ծանուցմամբ/ պահանջվող փաստաթղթերը առկա են և կազմված սահմանված պահանջներին համապատասխան:

3.1 "ՆՆԱ" ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում ընթացակարգի հրավերով /ծանուցմամբ/ պահանջվող փաստաթղթերը չեն համապատասխանում սահմանված պահանջներին : Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի 168-Ն որոշման Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջների մերժել "ՆՆԱ" ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0: